Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

05 JAN 2010

26.319

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ

# ՀՐԱՀԱՆԳ

## ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԱՆԴԱՄ-ՆԵՐԻՆ ՎԵՐԱՀԱՇՎԱՌՄԱՆ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՅԵՐԵՎԱՆ—1931

14 JUN 2013

Պ:ՏՀ ՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌԵՊ. 6165 (Բ)
ՊԱՏՎԵՐ 605
ՏԻՐԱԺ 200

26319
334.6
Հ-99

# ՀՐԱՀԱՆԳ

## ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՌՄԱՆ ՅԸՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

### I. ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՎԵՐԱՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Արհեստագործական կոոպերատիվների անդամների վերահաշվառումը կատարվում է ԽՍՀՄ-ի ԲԳՏ Գ. կողմից հաստատված «Ա» ձևով:

2. Յուրաքանչյուր արհեստագործական կոոպերատիվի վարչություն անդամների վերահաշվառումն անցկացնելու համար նշանակում է հատուկ պատասխանատու անձ, որը տանում է այդ աշխատանքները Միության ղեկավարությամբ և նրա տված հրահանգչական ցուցմունքներով: Այդ անձի անունը կոոպերատիվի վարչությունը հաղորդում է Միությանը:

3. Անդամներին վերահաշվառման յենթարկելու և քարտերը կազմելու համար, նայած աշխատանքի ծավալին, արհեստագործական կոոպերատիվի վարչությունը պարտավոր է տրամադրելու պատասխանատու ղեկավարին անհրաժեշտ քանակով տեխնիկական աշխատակիցներ—գրագետ ակտիվ անդամներից, վերստուգիչ հանձնաժողովների անդամներից, կուլտաշխատակիցներից և այլնից: Այն դեպքում, երբ արտելի կազմում բացակայում են նման աշխատակիցներ, թույլատրվում այդ աշխատանքն անցկացնելու համար հրավիրել մարդիկ դրսից (աշակերտական և գյուղա-

14839-57

տնտեսական կոոպերացիայից, գյուղխորհրդից, շրջ-գործկոմից և այլն): Այդ դեպքերում թույլատրվում է աշխատանքը տանել հատուկ վարձատրությամբ, անցկացնելով այդ ծախսերը կոոպերատիվի հաշվին:

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ կոոպերատիվների հաշվապահները և հաշվետարներն առանց այն էլ ծանրաբեռնված են իրենց անմիջական աշխատանքներով, առաջարկվում է նրանց չծանրաբեռնել անդամների համար քարտեր կազմելու աշխատանքով և դրանով նրանց զբաղեցնել միայն ծայրահեղ անհրաժեշտ դեպքերում:

4. Սահմանված ժամկետում այդ աշխատանքի պատասխանատու անձի ղեկավարությամբ կոոպերատիվը վերահաշվառման է ենթարկում իր բոլոր անդամներին համաձայն ցուցակի: Մինչ այդ պետք է պարզել թե արդյո՞ք անդամների ցուցակը վարված և համապատասխանում իրականությանը: Յեթե ցուցակում կլինեն անձնավորություններ, որոնք փաստորեն դադարել են անդամ լինելուց—բաժնավճարները չեն մուծում կամ դիմում են տվել հեռանալու, բայց նրանց հեռանալը դեռ ևս վարչության որոշումով չի ձևակերպված, պետք է այդ մասին հարց հարուցել վարչության մեջ և մաքրել կոոպերատիվի անդամների ցուցակը:

5. Անդամի քարտի լրացման կարգը ցույց է տրրված այս հրահանգի II մասում:

6. Քարտերի տեղեկություններն ըստ էության ստուգելու և կոոպերատիվի անդամին որոշ սոցիալական կատեգորիայի դասելու համար, կոոպերատիվներում կազմակերպվում է հանձնաժողով գյուղական կոոպերատիվներում՝ կոոպերատիվի, գյուղխորհրդի,



կուսկոմի և ԼԿՅԵՄ-ի բջիջների, չքավորական խըմբակի և կոլտնտեսության ներկայացուցիչներից. քաղաքներում՝ կոոպերատիվի, Քաղխորհրդի կոոպերատիվ սեկցիայի, կուսկոմի և ԼԿՅԵՄ բջիջի, Միության, տեղական գործարանների և ֆաբրիկաների բանվորական բրիգադների ներկայացուցիչներից:

7. Հետագայում, հանձնաժողովի աշխատանքները վերջանալուց հետո, քարտերը դրվում են կոոպերատիվի դրասենյակը և այնտեղ պահվում են որոշ կարգով, մյուս փաստաթղթերի հետ միասին:

8. Կոոպերատիվի անդամի քարտը լրացվում է նաև այն բոլոր անդամների համար, որոնք անդամագրված են վերահաշվառումից հետո:

## II. ՀՐԱՀԱՆԳ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԱՆԴԱՄԻ «Ա» ՁԵՎԻ ՔԱՐՏԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Արհգործկոոպերատիվի անդամի քարտը լրացնում է այն անձը, որը կոոպերատիվի կողմից նշանակված է այդ աշխատանքի համար: Չի թույլատրըվում, որ անդամն ինքն լրացնե իրեն քարտը:

2. Արհգործկոոպերատիվի անդամի քարտը լրացվում է մի մասն անդամի ցուցմունքների հիման վրա, մյուսը՝ փաստական տվյալներով (դրա մասին խոսվում է քարտի առանձին հարցերի մասին ցուցմունքներ տալիս):

3. Անդամի քարտը հանդիսանում է պաշտոնական փաստաթուղթ, դրա համար էլ նրա լրացման վրա պետք է դարձնել ամենալուրջ ուշադրություն, ինչ-

պես այնտեղ գրվող տեղեկությունների ճշտության, այնպես և պարզ և մաքուր լրացնելու տեսակետից:

Անդամին հարցաքննելիս պետք է նախազգուշացնել, որ նրա վրա չէ ընկնում հաղորդած տեղեկությունների ճշտության լրիվ պատասխանատվությունը:

4. Յեթե յերևան են բերվում սխալ տեղեկություններ, որ տվել է անդամն իր մասին, այդ հարցը քննության է առնվում կոոպերատիվի վարչության կողմից՝ նրան պատժի յենթարկելու կամ անդամ կոոպերատիվից հեռացնելու համար:

5. Արհգործկոոպերատիվի անդամին նախապես պետք է իրազեկ դարձնել վերահաշվառման ժամկետի և այն փաստաթղթերի մասին, որ նա պետք է ներկայացնե կոոպերատիվին:

## Բ. ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔԱՐՏԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Ներքևում տրվում են համառոտ բացատրություններ այն հարցերի մասին, որոնք քարտը լրացնելիս, կարող են հասկացվել տարբեր տեսակ: Նախքան վերահաշվառման անցնելը, պետք է այս բացատրությունների հետ լավ ծանոթանալ:

**2-րդ հարց.**—Ցույց է գրվում անդամի ներկայիս բնակավայրը, ըստ որում գյուղատնտեսության հետ կապ պահպանող, բայց քաղաքում ապրողների համար ցույց է տրվում, բացի քաղաքի հասցեյից, նաև այն գյուղի հասցեն, որտեղից նա յեկել է:

**5-րդ հարց.**—Գրագետ պետք է հաշվել այն անդամներին, որոնք գիտեն միայն կարդալ, թեկուզ գրել բոլորովին չգիտեն կամ վատ են գրում:



**7-րդ հարց.**—Պետք է առանձին ցույց տալ կոմկուսի, **ԼԿՅԵՄ** անդամներին և անկուսակցականներին:

**8 հարց.**— Յեթե հարցաքննվող անդամը զանազան ժամանակներում ընդհատումներով յեղել է տարբեր արհգործկոոպերատիվների անդամ, պետք է ընդհատումները հանել նրա ստաժից: Յեթե տվյալ կոոպերատիվի անդամն յերբևիցե հեռացվել է որևէ արհգործկոոպերատիվից, հեռացնելու պատճառը պետք է ցույց տալ 9-րդ հարցի պատասխանում:

**11-րդ հարց.**—Այս հարցը նախատեսնում է այն անձանց, որոնք ընտրական իրավունքներից զրկված են ներկայումս, և չի տարածվում այն անձանց վրա, որոնք առաջներում զրկված են յեղել իրավունքներից, իսկ հետագայում վերականգնվել են: Այս հարցի մասին անդամների հաղորդած տեղեկությունները պետք է փաստական տվյալներով (քաղաքներում պետք է ներկայացնել փաստաթուղթ համապատասխան մարմիններից, իսկ գյուղական վայրերում այդ մասին, տեղեկանքներ պետք է պահանջել ոչ թե անդամներից, այլ հետաքրքրող անդամների մասին տեղեկությունները պետք է ստանալ անմիջապես գյուղխորհուրդներում կամ շրջգործկոմներում):

**12-րդ հարց.**—Անդամի նախկին սոցիալական դրության փոփոխումը տրվում է այն խմբավորումով, որը ցույց է գրված քարտում:

Արհեստի հետ գյուղատնտեսությամբ պարապողների համար ցույց է գրվում—կոլտնտեսական, չքավոր, միջակ, կուլակ և ձայնազուրկ (ոչ կուլակ), գյուղատնտեսությամբ չպարապողների՝ վարձու բան-

վոր, ծառայող, արհեստավոր առանց վարձու բանվորով, առևտրական, ձեռնարկատեր, ձայնազուրկ: Այդ հարցի տեղեկությունները վերահաշվառման ժամանակ լրացվում են հարցաքննվողի ասածի հիման վրա, իսկ հետո կոոպերատիվում յեղած նյութերով այդ տվյալները ստուգվում են և այդ ստուգման հիման վրա համապատասխան ուղղումներ են մտցվում քարտի մեջ: Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, վոր ինչպես մինչ Հոկտեմբերյան Հեղափոխությունը, այնպես էլ նրանից հետո անդամի սոցիալական դրությունը մի քանի անգամ կարող եր փոփոխվել, անհրաժեշտ է հարցաքննության միջոցով և այլ նյութերով վորոշել այն սոցիալական դրությունը, վորը հարցաքննվողի համար տիպիքական է հանդիսանում:

**12-րդ հարցի** տեղեկություններն անդամի սոցիալական դրության մասին անցյալում պետք է նյութ ծառայեն վորոշելու նրա ներկայիս սոցիալական դրությունը:

**13-րդ հարց** — 13-րդ հարցի պատասխանի համար հատկացված են յերեք տողեր: Անդամին հարցաքննելիս լրացվում է միայն վերևի տողը, իսկ մնացած յերկու տողերը մնում են դատարկ՝ անդամների հետագա վերահաշվառումների փոփոխությունները մտցնելու համար:

4-րդ սյունյակը լրացնելիս աչքի առաջ պետք է ունենալ այն հանգամանքը, վոր յեթե հարցաքննվողի ընտանիքի անդամներից մեկը կամ մի քանիսը հանդիսանում են անդամ վոչ թե տվյալ, այլ ուրիշ արհգործ-



կոոպերատիվի, նրանք այստեղ հաշվառման չեն յենթարկվում:

6, 7, 8, 9 և 10 սյունյակների տեղեկությունները պետք է լրացվեն վոչ թե անդամների ասածների հիման վրա, այլ անդամների ներկայացրած փաստաթղթերի կամ տեղական մարմիններից ստացած համապատասխան տեղեկանքների հիման վրա: Համենայն դեպս անդամների հայտնած այս սյունյակներին վերաբերյալ տեղեկությունները պետք է մանրամասն կերպով ստուգման յենթարկել:

հակություն և այլն)․ յեթե անդամն աշխատում է տանը—ցույց են տրվում պատրաստված արտադրանք

11-րդ սյունյակ․ Յեթե կոոպերատիվի անդամները աշխատում են ընդհանուր արհեստանոցում, ցույց է տրվում արտադրությունը (կոշկակարություն, ջուլ-ների անունները․ (կոշկեղեն, չորեղեն և այլն):

12-րդ սյունյակում ցույց են տրվում անդամի տվյալ արտադրությամբ փաստորեն զբաղված տարիների թիվը, չհաշվելով դրա թվում յերկարատև ընդմիջումները:

13-րդ սյունյակում ցույց է տրվում, թե անդամը տվյալ արտադրությունում ինչ մասնագիտությամբ է զբաղվում (ձևողը դերձակության մեջ, գործողը ջուլհակության մեջ և այլն):

14-րդ սյունյակում ցույց է տրվում, թե արդյո՞ք կոոպերատիվի անդամն աշխատում է ընդհանուր արհեստանոցում կամ մի այլ կոլեկտիվ արտադրությունում (քարհանք, անտառամթերում), թե տանը (անհատական արտադրություն):

15—20 սյունյակներում ցույց են տրվում այն անձինք (ընտանիքի անդամներից և վարձուներից), վորոնք արհեստով զբաղվում են թեկուզ վոչ բոլոր ժամանակ, այլ մասամբ, մյուս աշխատանքներից ազատ ժամանակ: Ըստ վորում պատահական կերպով արհեստով զբաղվելը հաշվի չի առնվում:

Քարտն անպայման ստորագրում է հարցաքննող անձը, ըստ վորում վերջինս նախազգուշացվում է, վոր նա պատասխանատու յե իր հաղորդած տեղեկությունների ճշտության համար:

Քարտը պետք է ստորագրե նաև այն անձը, վորը ստացել և հավաքել է համապատասխան տեղեկություններ անդամի մասին զանազան մարմիններից. (յեկամտի գումարի, հարկի և այլնի մասին):

Արհգործ. կոոպերատիվի անդամի ներկայիս սոցիալական դրությունը ստուգող հանձնաժողովի կողմից վորոշելիս, սահմանվում են հետևյալ միատեսակ կատեգորիաները: Գյուղատնտեսությամբ պարապողների համար—կոլտնտեսական, չքավոր, միջակ. կուլակ, ձայնազուրկ (վոչ կուլակ), գյուղատնտեսությամբ չպարապողների համար—բանվոր, ծառայող, արհեստավոր վարձու բանվորով, առևտրական, ձեռնարկատեր, ձայնազուրկ:

Ընտանիքի անդամները դասվում են այն կատեգորիային, վորին պատկանում է ընտանիքի գլխավորը: Ըստ վորում յերիտասարդների քարտերում պետք է գրել. «չքավորի» աղջիկ կամ տղա, «ձայնազուրկի» աղջիկ կամ տղա և այլն: «Կոլտնտեսականնի» կատեգորիային պետք է դասել կոլտնտեսությունների բոլոր անդամներին և արհգործկոլտնտեսության այն անդամներին, վորոնք իրենց գյուղատնտեսությունը համայնացրել են, իսկ այն արհգործ. կոլտնտեսության անդամները, վորոնք իրենց գյուղատնտեսությունը չեն համայնացրել, բաժանվում են սահմանված ընդհանուր կատեգորիաների մեջ:



Կոլտնտեսականների քարտի մեջ, իբր ստուգիչ մոմենտը, գրվում է, կոլտնտեսական—բատրակներից, կոլտնտեսական—չքավորներից, կոլտնտեսական միջակներից:

Ըստ վորում արհգործ. արտելի վարչությունը պետք է ճշտորեն իրագործե Միութենական Կ. Գ. Կ. և Ժ. Կ. Խ. վորոշումը՝ չընդունել արհգործկոոպերատիվում անդամ. կուլակին և ձայնազուրկին, բացառությամբ այն դեպքերում, ինչպես նախատեսված է այդ վորոշումում, յերբ տվյալ ընտանիքի անդամների մեջ կան Խորհրդային Իշխանության նվիրված կարմիր պարտիզաններ, կարմիր բանակայիններ, գյուղական ուսուցիչներ և գյուղատնտեսներ, այն պայմանով, յեթե վերջիններս յերաշխավորում են իրենց ընտանիքի կուլակ կամ ձայնազուրկ անդամի համար

Գյուղական վայրերում արհգործկոոպերատիվի անդամին այս կամ այն սոցիալական կատեգորիային դասելու համար, պետք է համաձայնեցնել գյուղխորհրդի հետ:

Թարգմանեց Վ.—Կ.

# ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

________________ Արտելին

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ արհեստագործական կոոպերացիայի համար բացառիկ նշանակություն ունի նրա ամենամյա պարբերական վերահաշվառում՝ պարզելու համար յուրաքանչյուր անդամի սոցիալ-տնտեսական դրությունը և ամբողջապես մաքրելու՝ արհգործ· կոոպերացիայի ցանցը կուլակ-նեպմանական, սոցիալապես խորթ-անհարազատ տարրերից ու ձայնազուրկներից, կազմված է նոր քարտ, որը հաստատված ԽՍՀՄ ԲԳՏ Կ. «Ա» ձևի տակ: Այդ քարտը տպված է տպարանում և սույնի հետ ուղարկվում է ձեզ... օրինակ:

Այս շրջաբերականը ստանալուն պես պետք է անմիջապես ձեռնարկել կոոպերատիվ անդամների վերահաշվառման աշխատանքին, անպայմանորեն լրացնելով յուրաքանչյուր անդամի համար մի քարտ «Ա» ձևի:

Հայաստանում այդպիսով վերահաշվառման պետք է յենթարկվի մոտ 10 հազար մարդ, այսինքն՝ յերկրի բոլոր մանր արդյունաբերողների մոտ կեսը, որի համար էլ պահանջվում է մեծ, մանրակրկիտ նախապատրաստական կազմակերպչական աշխատանք և ցանցի ղեկավարից ու բանվորաց մասի ակտիվ մասնակցություն:

Այդ ստուգումով մենք գլխավոր արդյունքի կհասնենք հետևյալ դեպքում. 1) յեթե յեռանդով և ժամանակին սկսվեն այդ աշխատանքները բոլոր արտելներում. 2) յեթե ճիշտ և ուշադիր կերպով լրացվեն քար-

ները արտելի բոլոր անդամների համար․ 3) չեթե ճիշտ նշված կազմակերպվի հասարակական վերստուգումը և այս կամ այն անդամն ճիշտ դասվի սահմանված սոցիալական կատեգորիաներից մեկին:

Արտելիդ. անդամների վերահաշվառման աշխատանքները պետք է սկսել . . . . . . . . .

. . . . . . . . . . . .

Քարտերի լրացման կարգը որոշվում է հատուկ հրահանգով, որը սույն շրջաբերականի հետ ուղարկվում է ձեզ:

Քարտի մեջ սահմանված սոցիալական կատեգորիաները թույլ չպետք է տան կարծելու, որ, այնպիսի խմբեր, ինչպիսին են առևտրական-ձեռնարկատերերը, կուլակը, ձայնազուրկը, կարող են լինել արհեստ. կոոպերատիվի անդամ, այլ այդ խմբավորումը գրված է, որպեսզի նման տարրերն յերեվան բերվեն և հեռացվեն անդամների կազմից:

Արհգործ. կոոպերատիվում անդամների վերահաշվառումը պետք է կազմակերպել հետևյալ ձևով

1. Կոոպերատիվի վարչությունը վերահաշվառման աշխատանքների համար նշանակում է մի պատասխանատու անձ և նրա ազգանունը հաղորդում է Հայա-նարկոոպի կազմ-մասսայականվարչությանը:

Այդ անձը չի կարող լինել կոոպերատիվի հաշվապահը, որպեսզի նա կարողանա կատարել իր վրա դրված անմիջական պարտականությունները, բայց այդ անձը կարող է լինել կոոպերատիվի վարչության նախագահը:

2. Վերահաշվառման պատասխանատու անձը իրեն



օգնելու համար կազմակերպում է ցուցակագրողների մի խումբ, որը բաղկացած պետք է լինի կոոպերատիվի բանիմաց, գիտակից, գրագետ, ակտիվ անդամներից, այն հաշվով 50—75 ցուցակագրվելիք անդամների համար լինի մեկ ցուցակագրող: Յեթե կոոպերատիվում բացակայում են այդպիսի անձինք, ցուցակագրողներ կարելի յե վերցնել տեղական հասարակական և պետական մարմիններից կամ ֆաբրիկաներից և գործարաններից:

Ցուցակագրողների աշխատանքը կարելի յե վարձատրել կամ ժամանակով կամ գործարքային ձևով արտելի միջոցներից: Դրա հետ միասին արհգործ. կոոպերատիվում կազմակերպվում է ստուգող լիազոր հանձնաժողով, որի մասին մանրամասն գրված է հրահանգում:

3. Վերահաշվառման պատասխանատու անձը, մինչև ընդհանուր ցուցակագրություն սկսելը, հրավիրում է ցուցակագրողներից մի քանի ժողով, ուր մանրամասն կերպով ուսումնասիրվում է անդամի քարտի լրացման հրահանգը և մի քանի անգամ փորձնական լրացում են կատարում քարտերում, ապա անցնում են իսկական աշխատանքի:

4. Յերբ արդեն քարտերը լրացվել և ստուգվել, իսկ կոոպերատիվի անդամները բաշխվել են ըստ սոցիալական խմբերի, որի մասին նկատողություն է դրվում քարտում, քարտերը խմբավորվում են և անց կացվում հատուկ տախտակների մեջ, որը հետագայում լրացուցիչ կերպով կուղարկվեն կոոպերատիվներին:

Պլան-արտադրական վարչպետ

Կազմ մասսայական վարչպետ

Պլան էկոնոմ. սեկտորի վարիչ

ՊԵՏ. Гос. А
ИМ. А.
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0197836
-89